

ԾԱՂԻԿ

ԿՃՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԾԱՂՐՈՂՆԵՐՈՒ ՕՌԿԱՆ

ԱԶԳ. ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՍԱՏԻՐԱԿԱՆ
Ծ Ա Ղ Ր Ա Թ Ե Ր Թ

Որ ամէն բան կը մեղացնէ, չլսածը կը պատմէ, չեղածը կը նկարագրէ,
միտք կ'երեւակայէ, կը ծաղիկ եւ... Եւրոպականի:
Այս ամէնը կը հաւաքէ, կը դասաւորէ, կը խմբագրէ
ԳՐԻԳՈՐ ԹՈՐՈՍԵԱՆ (Բ. ԼՈՒԻՅԵԱՆ)

«ԿԱՎՈՐՇ» — «ԾԱՂԻԿ» ԵՂԲԱՅՐԱՑՈՒՅԻՒՆ

— ՆՈՐ ԿԱՆՈՆԱԿՈՐ —

Ամէն մարդ դիտել կուտայ մեզ քէ՛ Կավո՛րշ եւ Ծաղիկ միասին շատ ուղի կը նային:

— Մենք Կավո՛րշն ալ Ծաղիկէն ալ չենք կրնար զատել, կ'ըսենք, բայց զի ներքինի մը ամանցուցէ՛ք, որպէս զի երկուքն մէկանց բաժանորդ գտնինք:

Մեր բարձրագոյն ասեանք այս փափուկ խնդիրը նկատուի թեան առնելու համար բացառիկ ճիշտ մը գումարեց եւ որոշեց հետեւեալ վերջնական սակագինը:

★ Կավո՛րշ եւ Ծաղիկ միասին, տարեկան, Պոլսոյ համար 80, վեցամսեայ՝ 45 դրու: Կավո՛րշ կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 45 դրու:

Կավո՛րշ եւ Ծաղիկ միասին, տարեկան, Դաւառի համար 100, վեցամսեայ՝ 60 դրու: Կավո՛րշ կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 60, վեցամսեայ՝ 35 դրու:

Կավո՛րշ եւ Ծաղիկ միասին, Արտասահմանի համար տարեկան 25 ժր., վեցամսեայ՝ 13 ժր.: Կավո՛րշ կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 15, վեցամսեայ՝ 8 ժրու:

★ Զրի քե՛ր կուսանք կոր եւ զաւեշտաքէ՛րք մանաւանդ:
Բայց ամէն մարդ զիտէ արդէն քէ մենք փարայի համար չենք աշխատիր, — ո՛հ, քա՛ն լիցի, — այլ Հա՛յ ազգին համար:

Կ.Ե.Ի.

Թիի 31

10 ՓԱՐԱ

Հասցէ՝ Ղալաթիա, Գուրչուշու խան թիւ 7

3 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1908 ՈՒՐԲԱԹ

زاغيك غزيمسى درعليه ده غلطه قورشولى خاندہ نومرو ۷

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՆՔ ՄԻ ՉԵՆՔ ՄԻ...

Մենք ալ չուարեցանք:

Ե՛նք մի, չե՛նք մի:

Եթէ պօռալներու, կանչելներու նայելու ըլլանք՝ ենք, իսկ եթէ պօռալներու կանչելներու չնայելով լո՛ւ ինչպէս ենք, չենք:

«Կեցցէ՛ Սահմանադրութիւն» կը պօռանք, որովհետեւ գործերնուս չի գար մտածել թէ արդեօք ճշմարտապէս Սահմանադրութիւնը կայ թէ ոչ:

Մարդ ի՞ր ուզած բաները չուզեր ըսել արդէն և մենք մէկը երբէք չպիտի ուզէ բարձրաձայն յայտարարել թէ Սահմանադրութիւն չկայ, վախ՛նալով որ իրաւցնէ չըլլար:

Մենք որ ամենէն յանգուստն ենք, երբէք բերանացի չպիտի ընէինք այս յայտարարութիւնը, և ճիշտ բերանացի չկարենալ ընելնուս համար է որ գրաւոր կ'ընենք:

Դանի մը ամիսէ ի վեր ազատութեան, հաւասարութեան, եղբայրութեան վրայ պօռացինք կ'անչեցինք:

Բայց, մտածող եղա՛ւ թէ այդ հաւասարութիւնը և ազատութիւնը ո՛ւր են:

Տխրապէքիրէն լուր կուգայ թէ հոն չարք կայ:

Պէշիքթաշի մէջ խուժանը ոստիկանատունը կը յարձակի և հոնկէ առնելով Յոյն տղայ մը կը սպաննէ զայն, որովհետեւ սիրային խնդիր է ունեցեր թրքուհի մը հետ, նոյն իսկ անոր հաւանութեամբ:

Ոստիկանները, որ ըստ Սահմանադրութեան իրաւունք չպիտի ունենային ուրիշին տունը մտնել, Օսմ. թատերաբեմէն ներս կը մտնեն և ամենայն ազնուութեամբ դերասան պաշտօնեաները սիրիւ/իշխմի ընելով ոստիկանատուն կը տանին:

Ճամբորդներ զուրթէն կուգան անցագիրով կամ առանց անցագրի, և Հայերը՝ ճի՛շդ ըստ առաջնոյն՝ ոստիկաններուն մասնաւոր հոգածութեան! առարկայ կ'ըլլան, մինչ միւս ազգէ ճամբորդներ հանգիստ կերպով և առանց հարցաքննուելու ճամբանին կը շարունակեն:

Ոստիկանները Հայերէն թէ՛ լռելիքէ կը պահանջեն, մինչդեռ Հայ չեղող-

ներուն թէ՛ լռելիքէ ունենալը կամ ոչ՝ խնդիր չէ:

Թաղապետական ընտրութիւններ կ'ըլլան, բայց երբ տեղական կառավարութիւնը կը տեսնէ որ անգամսեալու մեծամասնութիւնը Յոյն է կամ Հայ, կը ջանայ բեկանել այդ ընտրութիւնը՝ բողանելու մեծամասնութիւն տալու համար:

Եւ մեր Պատրիարքարանը կը շարունակէ ըստ առաջնոյն թագրի գրել միշտ, Դամէր էֆ., այդ մաքուր գիրով գրուած թագրիւնները Բ. դուռը կը տանի: Ներքին գործոց նախարար Հազգը պէ՛յ «չաա ազէկ» կ'ըսէ ըստ առաջնոյն և ըստ առաջնոյն նորէն... բան մը չըլլար:

Եւ բոլոր այս բաներուն և առանց նմաններուն կ'ըսեն հաւասարութիւն, ազատութիւն, չեմ գիտեր ինչ և չես գիտեր ինչ:

Նզրայրեն'ր, հայրենակիցնե՛ր, շատ կը փափաքինք որ ազատութիւն և հաւասարութիւն ըլլայ և ճշմարտապէս Սահմանադրական ժողովուրդ մը ըլլանք մենք, բայց ցաւով կը տեսնենք թէ դեռ շատ ապուր պէտք է ուտենք, Սահմանադրական ժողովուրդ մը ըլլալու համար:

Եւ ձեզի բան մը ըսեմ:

Նոյն իսկ եթէ այս Սահմանադրութիւնը իրաւցնէ ալ եկած ըլլայ մենք նորէն խեղ մը չպիտի տեսնենք ատկէ:

Մենք պիտի պայքարինք, զուրի պիտի պատուենք, խօսք հասկցնելու համար պիտի ճաթինք և դեռ շատ պիտի աշխատինք, իսկ Սահմանադրութեան խերը մեր թոռնե՛րը պիտի տեսնեն միայն:

Ահա՛ ճիշտ ատոր համար է որ այս օրերս կարգուելու միտք ունիմ, որպէս զի ժամ առաջ զաւակ մը ունենամ, և յետոյ թու մը, որպէս զի գոնէ թուս վայելէ ազատութեան լարիքները, քանի որ մենք վայելելիք չունինք:

ԳՐ. ԹՈՐՈՍԵԱՆ.՝)

(*) ... Որ Սահմանադրութեան շնորհիւ... թու ալ պիտի ունենայ... վախ, վախ, վախ:

ՎԱՂԸ «ԿԱՎՈՐՇ»-ԻՆ ՄԷՋ
ՆԱՓԸՇԽԱՆ ԿՆԻԿՆԵՐԸ

ԿԻԿՈ-ԹՈԿՈ ԱՆԿԱԶՄԱԿԵՐՊԵԱԼ

Հ. Յ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ա. ՄԻԹԵՆԿԸ

Ինչպէս կանխաւ ծանուցուած էր, Նոր Զելանտան փրկելու համար իր արիւնը, ոսկորը, միտքը զո՛ւարեցրու թեան մասային վրայ դնող Կիկո-Թոկո Անկազմակերպեալ Հ. Յ. Կուսակցութիւնը, իր Ա. միթինկը գումարեց, առջի օրուան կէս գիշերէն վերջը, նախ Թօքաթլեանի և յետոյ Փրաթլեի սրահներուն մէջ՝ ժամը 9ին ըստ Նոր Զելանտայի Այս առթիւ Թօքաթլեանի կառօնները հազած էին Նոր Զելանտայի թշուառ վայրենիներուն հազուստները, ի պատիւ Նոր Զելանտական Բօմիդէին, որուն անդամներուն կ'սպասէր ներկայ 8,546,769 1/2 ամէն ազգէ, կրօնքէ և ուրիշ բաղմութիւնը: Սրահին ճակատը կը ծածանէր Թօկո-Կիկո Կուսակցութեան խորհրդանիշը կրող դրօշակ մը: Պատերուն վրայ կ'երևէին հերոս Զելանտացիներու պատկերներ: Մէկ կողմը շինուած էր Զելանտական բերդի մը մանրանկարը, որուն պատնէշներուն վրայ արթուն կը հսկէին նոյն կուսակցութեան անդամները՝ սուր ի ձեռքին, փամփուշտ ի գրպան և հրացան՝ ուսընդանու թ:

Միթինկը բացուելէն առաջ, քրահին դուռը բացուեցաւ և ներս մտան Անկազմակերպեալ Յեղափոխական Կուսակցութեան երկու հերոս և քաջամարտիկ պետերը՝ ընկեր Կիկո և ընկեր Թօկո թեւ թեւի մտած. ասոնց հետեւէն կուգային խօրագային քիւյրերով պնդաբարեւած և կիսավայրենի հազուստներով՝ կուսակցութեան միւս Ընկերները և Կ. Պոլսոյ Կենդրոնական Կօմիտէի անդամները:

Սրահը ամբողջ ծափերով թնդաց և կեցցէներով գոռաց. ասոր հետեւանքով էր որ Թօքաթլեանի առաստաղը ծածկող խաչաւանդէն մէկ քանին ինկան հանդիսականներուն վրայ:

Միթինկը բացաւ, թէ և ո՛չ դուռ ունի միթինկը և ո՛չ ալ պատահան, ընկեր Կիկո, որ միեւնոյն ատեն կը նախազանէր միթինկին՝ իրրեւ պետ Նոր Զելանտայի Կենդրոնական Կօմիտէի, Ներկայ էին նաև Ընկեր, Ընկեր Տէր Յակոբեան, Բարսեղեան,

ԿԱՐԿԱՑԷՐ ՎԱՂԸ

ԵԱՓԸՇԽԱՆ ԿՆԻԿՆԵՐԸ

Շահէն, Թուղլաճեան որոնք ծալապատիկ նստած էին և սիկառ ծխելու կը պատրաստուէին:

Յեղափոխական ընկերներ նախ երգեցին Նոր Զելանտական վայրենաշունչ և հայրենաշունչ երգեր, որոնց մէջ սապէս բաներ կային. «Ներթանք եղբարք. երթանք, միշտ երթանք. եթէ չերթանք. արիւն ձեր ի գլուխ ձեր. Նոր Զելանտան ձեռքէ պիտի ելլէ, և այլն, և այլն»:

Յետոյ ընկեր Թօկո բեմ ելաւ և բացաւ նախ միթինկը և յետոյ... օրհնեալ բերանը:

Վսեմ էր պահը:

Ներկինք կ'որոտար կարծես. Եհո՛ւ վան ինչպէս որ Մօիսէի երևաց Սինա լեռան վրայ, նոյնպէս ալ ընկեր Թօկո երևաց... բեմին վրայ: Սա տարբերութեամբ որ մէկը Ներկինք Փրկիչն էր և միւսը... Նոր Զելանտայի:

Այդ ահագին բաղմութիւնը չունէ չէր առներ, ո՛չ իսկ կը քնանար. բերանարաց կ'սպասէին, որպէս զի ընկեր Թօկո բանայ իր մեղաճորան բերանը և... անուշիկ բերանները:

Ահ, նկարագրելու արժանի, աստուածային, մեծ, ամենի, երկնային, երկրային և հրաշապատում այդ միթինկը. Նոր Զելանտայի երջանիկ ըլլալու է որ այդ տեսակ գործիչներուն, որոնք մոռցած ունին բան, կին, քոյր, մայր, սիրուհի, զաւակ, դրացի, մոռցած նաև՝ հանդէպ ընկերութեան և... խառնալին ու պախալին իրենց ունեցած պարտքը, նետուած են յեղափոխական գործին մէջ և կը... լողան:

Օրուան հերոս բանախօսին նիւթն էր «Շուներու և կատուներու համեմատաբարութիւնը... Նոր Զելանտայում և Նոր Զելանտայի կնոջ քուէարկելու իրաւունք ունենալը կամ ոչ»:

Ընկեր Թօկո հազաց վերջապէս. թաղկինակը հանեց. մէկ ձեռքը սեղանին վրայ և միւսը... սեղանին տակը կամ գրպանը դրաւ. նորէն հազաց. ումպ մը ջուր խմեց. սեղանին ծածկոյթը չտկեց. հեղ մը առաստաղին և յետոյ բաղմութեան նայեցաւ և սկսաւ...

«Եղբարք Նոր Զելանտա մը կայ (թուռն ծախահարուքիւն). այդ եր-

կիրը թշուառ է և անտիրական. գուշում կը տիրէ հոն. տղաքներ 8 - 10 տարեկան կը բռնաբարուին. հաց չկայ, ջուր չկայ. պիլառաօր սեղան և նոյն իսկ թօքաթեան մը չկայ. հոն այդ սու երկրին մէջ ամէն բան կը գոչնան. պատին ալ կը գոչնան յօդուածներդ ալ կը գոչնան. հեղե կարգներդ... վրդր վրդր. (մեծ յուզում սրահին մէջ. ամենքը մեկ ներդաշնակօրէն կուշան... քառասուն) ո՛հ, հոն յունն ու կատուն զիրար կուտեն. աշխատիք այդ շուները և կատունները համարալիս պահելու. անոնց համար լսարաններ հիմնենք, այդ երկու անհամարալի ցեղերու երիտասարդներէն միութիւն մը կազմենք. (կազմարարները կ'սկըսին ծախհարել, տեսնելով որ իրենց գործ կը հայթայթուի):

...Արծիւ մը կը թռչէր. հարցուցի թէ ո՛ւր կ'երթար. Նոր Զեւանտա պատասխանեց. արդ կը տեսնէք որ արծիւն իսկ յեղափոխական է. ան ալ զուգումի երկիրը կ'երթայ. մենք ալ երթանք. ո՛ն յառաջ, եղբարք, միշտ յառաջ: (Ո՛հ ոք տեղէն երեւաց այս կոչին վրայ, որովհետեւ սրահն ամբողջ բերանաբաց... կը քնանար):

Ընկեր թօկօ յետոյ պարզեց, ասկէ առաջ Սահարայի անապատի բնակիչներուն գերութենէն ազատութեանը համար՝ իր կուսակցութեան մղած արիւնատիր պայքարը. պատկեր թէ ի՛նչպէս իրենց Անկազմակերպելաբանակը, որ կը բաղկանայ 22-23 տարեկան 7,314,642 1/4 Հայ կտրիճներէ, կտրեց անցաւ Սահարան, միշտ յաղթելով թշնամի բանակներուն, որոնք կազմուած էին արջերէ, դայլերէ, առիւծներէ և վագրերէ: Պատմեց թէ ի՛նչպէս միշտ իրենց գրպանը լեցուն պահելու համար, հարուստ Հայերուն քացանները կը պարպէին... յանուն աղագործութեան և թէ քանի՛ Նոր Զեւանտայի Տեղօրի ենթարկած են... իրենց վարա տուած չըլլալուն համար:

Ընկեր թօկօ, մօտ երեք ժամ, թէ՛ ինքզինքը և թէ՛ Ընկեր Կիկօն գովելէ ետք գոցեց իր բերանը, և դեռ պիտի չարունակէր թէ՛ թօքաթեան նի կառսօնները կաշիքը և յետոյ դուռները չգոցէին:

Միթիւնը վերջացաւ և Անկազմակերպելա Յեղափոխական Կուսակցութեան ընկերները ամբոխին թեւերուն վրայ դուրս հանուեցան: Ներկաները մեկնեցան դո՛ սպառնութեան մը տակ...:

Նօթագրեց
Պատիկ խանի Կենտրոնական
Կօմիտէի Ընկերներէ
ՄԻՆԸ

ԱՆԿՈՒՏԻՒ ՄԸ ՊՏՈՅՏԸ
(ԲԱՅԱՆԱԲԱՐ ՀԵՏԻՈՏՆԸ)
ՊԱՆՈՑ ԹԱԳԵՐՈՒՆ ՄԷՋ
ՂԱԼԱԹԻԱ
XIII

Ղալաթիա թաղ մըն է որ երբեք չնմանիր ու և թաղի. թաղ ալ չէ արդէն այլ ի՛նչ սինձեմ աւարա բան մը:

Այս թաղը ոչ սահման ունի ո՛չ սահմանազրուի. Ղալաթիոյ մէջ նրատող մաս մը կայ որ ինքզինքը Բերացի կ'անուանէ. Օրթագիւղցիները և Պէշիքթաղցիները Ղալաթիացի կը համարուին, իսկ բնիկ Ղալաթիացիներն են հանրակիները, գողեր ու մարդասպաններ, եւսիֆսիֆներ և գիւտիւներ: Հոս ո՛չ Աստուած կը ճանչնան, ո՛չ ալ Քրիստոս. Խորող կրօնքը բազմաթիւութիւնն է և պաշտուած չաստուածն է՝ Մեծն Բագոս: Ամբողջ Ղալաթիոյ մէջ մէկ հայկական, ինը յունական, երկու ռուսական, մէկ լատինական եկեղեցի, և չորս սինական ու երեք հատ ժողովարան կան: Իսկ Բագոսի համար կառուցուած են 8317 կուստուն, ուր առանց կրօնքի և աղբի խտրութեան ամէն մարդ կ'երթայ փառաբանութեան:

Հոս ո՛չ աղագայնձի կայ և ոչ քաղաքականձի. ընդհանրապէս կուստուններու մէջ Բագոս չաստուածին իրենց տուրքը վճարելէ ետք կը խորհրդակցին Մարտի կամ Էլէնի մը... գրաւման պարագաներուն վրայ: Կամ կը խորհին թէ ի՛նչպէս կողոպտելու է այսինչը և թէ ինչպէս անցորդներուն գրպանը պարպելու է:

Ղալաթիա ա՛յն է Պոլսոյ մէջ, ի՛նչ որ է գոգթը... պատուաւոր համարուած սպօններու մէջ:

Ներքին ամէնէն բանուկ առեւտուրն է... հայո՞ւթիւն, որուն վրայ ամէն լեզուէ գործ կ'ըլլայ: Կ'ըսուի թէ այս թաղը օրօրանն եղած է բոլոր ոճրագործներուն, գողերուն և հայոցողներուն:

Ղալաթիոյ կառավարութեան ձեռն է ռազմավարական հանրապետութիւն: Ասէն մարդ տէր է և իշխան՝ այս թաղին մէջ: Հպատակ չունի այս կառավարութիւնը:

Այլաբանագրական դիրքը տափաբակ ըլլալով, ձմեռները Ղալաթիա կղզիի մը կը փոխուի և նաւաւարները անապին դրամ կը շահին ու... հանրակիներուն հետ կուտեն: Ղալաթիոյ մէջ կը հոսին շատ մը գետեր, որոնք միանալով կը թափին Մարմարայի ծովը: Այս գետերը մինչև հիմայ կարելի չէ եղած նաւարկելի ընել, անոր համար որ կաղմուած շահագործական ընկերութիւնները միշտ կը կողոպտուին ճամբորդներու կողմէ:

Մարդ կողոպտելու մէջ այս թաղեցիներէն աւելի վարպետ չկայ: Փողոցին մէկ ծայրէն երբ մտնես, միւս ծայրէն դուրս չելած արդէն կը հանուեցնեն քեզի. ասիկայ պատճառ մը չէ սակայն որ բողոքես և կանչուուես, որովհետեւ փառք տուր որ միայն կը մերկացնեն...:

Շատեր այս թաղին սահմաններուն մէջ ոտք չկիտած, կամ ինքզինքնին կ'աղահովազեն և կամ իրենց զգեստին տակէն... զրահ կը հագնին:

Գլխաւոր լեռն է Ղալաթիոյ աշտարակը, որ Բաբելոնի աշտարակ ալ կրնայ կոչուիլ՝ երբ քաղաքական տեսակէտով նայուի հոն: Հրդեհի նշանը կը տրուի միշտ այս լեռնէն,

որուն գագաթը ձիւն չգտնուիր բընաւ, այլ միայն կրակ և ասոր համար հրաբուխ լեռ ալ կը կոչուի:

Ջերմուկ մըն ալ ունի, Գօֆիսիօն խանը, ուր քոնսուլտի վրայ մեծ գործ կ'ըլլայ միշտ: Շատ քրտնցնող ջերմուկ մըն է այս, որուն մէջ շատեր ուժ առնելու կը մտնեն և... ուժաթափ դուրս կ'ելլեն:

Գլխաւոր արհեստներէն մէկն է խաղամոլութիւն. կրօնք չա՛տ կայ, ինչպէս ըսինք, բայց գործածականը յայտնի չէ:

Ամէն բան կայ այս թաղին մէջ բացի օգէ և... բարոյականէ:

Այս երկուքը երբ ներս մտնել ուզեն այս թաղէն, սխալաբեկ անբիւղ գուրս կը վռնուին:

Ղալաթիոյ մէջ բնիկ հազիւ վաթսուէն-եօթանասուն հայու տուն կայ: Ատեն մը պանդուխտ Մշեցիներ, Վանցիներ և Պիթիսցիներ կային, որոնք կիրակիէ կիրակի թաղին Ս. Լուսաւորիչ եկեղեցին կը շէնցնէին և գանձանակները կը լեցնէին: Եթէ թաղեցիներուն մնար, Ս. Գրիգոր Լուսաւորիչ շատոնց կը մեռնէր անթաթութենէ: Իսկ հինգշաբթիէ հինգշաբթի ամէն թաղի բարեպաշտներ իրեն սուրբերը երեսի վրայ կը թողուն և Ղալաթիա կը վազեն. ասոր համար է որ, երբ Ղալաթիոյ փողոցներուն մէջ հինգշաբթի օրեր շտապող մարդիկ տեսնես... անկասկած եղիր որ ուխտաւորներ են: Մնացեալ օրերը Ղալաթիացի ո՛չ կը վազէ և ո՛չ ալ կը քալէ, ալ... կը գլտորի:

Ղալաթիոյ համբաւաւոր և միակ քիւլափն է... Բիւրքիւնեռու քիւլաք, ուր ամէն իօրկուն խորհրդակցութիւններ տեղի կ'ունենան տակառներու մէջ: Այս քիւլափն անգամնեւ բուն բնաբան է. «Խմել առանց գաւաթի»:

Ղալաթիոյ մէջ բարձրացած է նաեւ Կեղերոնական վարժարանը, որ չըջագատուած է բարեհաճաւ բնակչութիւններու տեղի կ'ունենան տակառներու մէջ: Այս քիւլափն անգամնեւ բուն բնաբան է. «Խմել առանց գաւաթի»:

Հոս կը գումարուէր և պիտի գումարուի Ազգ. Երեսփոխանական Ժողովը: Հետեւաբար մեր աղագային ներքին խնդիրները այս անկիւնէն պիտի կառավարուին:

Հոս է նաեւ կեղերոնական թանգարանը, որ տուն մը Բարգէն Վրդ.ի... խաւքներուն յանձնուած էր. կատուին թոք վտահելու պէս:

Ղալաթիա ունի ինտամակալութիւն մը, որուն անդամներէն մէկ մասը կրնան շատ լեցուն մարդ ըլլալ և մնացեալ մասը շատ պօշ մարդիկ ելած ըլլալ:

Ղալաթիոյ գլխաւոր բերքն է կիներ, որոնք միեւնոյն ատեն կ'երգեն ալ: Միայն այս թաղին մէջ է որ մահճակալները մեծ սպառնում ունին:

ՊՈԼԻՍԱՐԵՋԻՆ
ՎԻՅՈՄԻՐ ԼՈՌԻԹԻՆԵՈՎՍԻԻ
Յաշորդ անգամ (Պէշիքթաղ)

ՎԱՂԸ, ՇԱԲԱԹ, ԿԱՎՈՐՇՆՆ ՊԵՏԻ ՍԿՈՒ
ԵԱՓԸՇԽԱՆ ԿՆԻԿՆԵՐԸ
Տպել:

ՎԵՐՋԻՆ ՏԱԳՆԱՊԻՆ
ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

- 1.—Պուկար իշխանը ինքզինքը Ձար հոչակեց: Ասկէ առաջ հինգ գիրով իշխան էր. հիմա երեք գիրով Ձար եղաւ:
- 2.—Թուրքիա բողոքեց:
- 3.—Պուկարիա այս բողոքը մտտիկ չըբաւ:
- 4.—Տէրութիւններն ալ բողոքեցին:
- 5.—Գլխերները մինչև լոյս անգլ. դեսպանատան առջև «կեցցէ» պուռաց ժողովուրդը:
- 6.—Աւստրիա մաս ունի եղեր:
- 7.—Պօլքօթ, պօլքօթ:
- 8.—Շթալի և Թիրիկի առջև ժողովուրդը կը սպասէ, որպէս զի աւստրիական ապրանքներու վրայ գործ չըլլայ:
- 9.—Թիրիկի, Շթալի պաշտօնեաները կը մաղթեն որ այս պօլքօթը երկարի, որպէս զի իրենք ալ ներսը հանգիստ հանգիստ նստին, բայց պայմանաւ որ ամսականին միշտ գանձեն:
- 10.—Ֆէսերը կը փոխուին: Ճերմակ ֆէս, կռի ֆէս, քէչէ քիւլափ, խալիփա:
- 11.—Պուկարիա կ'ըսէ. — «Ի՛նչ կ'ըլլայ, ես միշտ թագաւոր մնամ, բայց չպատրուզմի՛ն»:
- 12.—Մուրատ պէյը ծակը կ'երթայ. թա՛մ ատենն էր:
- 13.—Աւստրիա կը բողոքէ. Բալլափիլին անտուկները ետ կ'ուզէ:
- 14.—Աւստրիական խանութները կը սնանկանան:
- 15.—Սերպիա կը գրգռուի, ինչո՞ւ կը գրգռի:
- 16.—Աւստրիա Պօսնա-Հէրսէքին վրայ կը նստի:
- 17.—Յունաստան կը խոստանայ պատերազմի միջոցին Թուրքիոյ օգնել, Կրետէ Յունաստանին միացում կը հուշակէ:
- 18.—Ամէն մարդ յուզուած է, բայց յուզումը մոռնալու համար ա՛լ աւելի կը ձեկէ:

ԼՐՈՇՆՈՒՆ
գտնեալով չ՛ց ցով ճյր ցլլցող
ՅԱԳՅԱԳՅԱ ԳՆՈՎՉՆԻՍ
առեալով յ՛ս աս իւր

ԳԻՇԵՐՈՒԱՆ ՇԵՌԱԳԻՐՆԵՐ
(Նմանողաբար)

Ամանա Մանթարիէֆ Հեռագրական Գործակալութիւնը, կէս գիշերը 2 ժամ անցած, հետեւեալ կարեւոր հեռագիրները հաղորդեց.
ԿԱՓԱՌՆԱՅՈՒՄ (Ժամ 2,4). — Տիտոս՝ Երեսպագէ՛մը պաշարեց:
ԲԱՐԻՉ (Ժամ 12,26). — Կոմիտէի միջոցի փոխտնօրէն, Վ. Հիւկոյի հետ սիրալիկ տեսակցութիւն մը ունեցաւ Օթեռայի թատրոնին մէջ:
ԵՐՈՒՍԱՂԻՄ (Ժամ 7,2). — Սափա թագուհին այցելութեան ելաւ Սողոմոնի:

ՓԱՆԱԳԱՆՆԵԱՆ ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Լեզուագիտական եւ Դեղաբուսական, Գիշերօթիկ եւ Յերեկեայ
Կ. Պոլս, Գատը Գիւղ, Մէօհլերտար ճամոտէսի
Ծրոյ Տարեցան

Վարժարանս Գիշերօթիկ Հաստատութիւն մըն է եւ աղջկանց խնամ-
եալ եւ հիմնական կրթութեանը նուիրուած է լեզուագիտական եւ գեղար-
ուեստական ուղղութեամբ:

Գիշերօթիկ եւ Յերեկեայ աշակերտութեան համար հանգստաւայելութեան
եւ առողջապահիկ ամէն միջոց խորհուած է:

Աղջիկներէն ուսումնարէ եւ գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ
զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Յունարէն, Անգղիերէն
եւ Թուրքերէն լեզուները, մասնագէտներու ձեռքով:

Մասնաւոր խնամքի եւ հոգածութեան առարկայ է Յիւսիսներէն եւ Անգ-
ղիերէն լեզուաց իմաստավարութիւնը (քոլաթիֆ): ԴԱՇՆԱԿ եւ ՋՈՒԹԱԿ:

Գիշերօթիկներու համար կատարեալ սնունդ եւ ընտանեկան անթերի
խնամք:

Աշակերտաց վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 1 Բ.:

Տեսչութիւն
Հիմնադիր-Տնօրէն
Հիմնադիր-Տնօրէն
Յ. Գ. ՓԱՆԱԳԱՆՆԵԱՆ



VALSE BRILLANTE

ԳԻՆԴՈՐ ԹՕԼԱՅԵԱՆԷ

Գին 5 դրուէ

Կեդրոնատեղին է յմեր իմրագրատունը

Կը ծախուի Կ. Պոլսոյ բոլոր երաժշտ.

խանութներուն մէջ

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԱՂԶԿԱՆՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ (ԳՕԼԷՃ)

Գիշերօթիկ եւ Յերեկեայ, 12 տարուան կատարեալ ընթացքով. 3 տարի
մանկապարտէզ, (երկսեռ) տարրական դասընթացք (երկսեռ) միջին դասըն-
թացք (միայն աղջկանց), բարձրագոյն եւ երկրորդական հինգ տարուան ըն-
թացքով (միայն աղջկանց):

Բաղմաթիւ Պոլսեցի եւ գաւառացի աղջտեւր ծնողաց առաջարկին վրայ,
բաց նք Սկիւտար-Իճատիէի կեդրոնին մէջ, օգտատուն եւ բարձրագոյն ընդարձակ
չէնիթիմը մէջ մեր աղջկանց բարձրագոյն-երկրորդական վարժարանը, ուր
աղջկային եւ ընտանեկան ընտիր դաստիարակութիւն մը պիտի տրուի, ձեռն-
հաս եւ պարկեշտ հայ եւ օտարազգի ծանօթ ուսուցչաց ձեռնմար: Բացի կրօ-
նական եւ բարոյական ուսուցումէ եւ մայրենի լեզուէ, խնամով պիտի աւան-
դուին թուրքերէն, ֆրանսերէն եւ անգղիերէն լեզուները բոլորովին նոր եւ
մանկավարժական դրութեամբ, ինչպէս նաեւ ուսանողական, բնագիտական
եւ բնապատմական, աշխարհագրական եւ պատմական ճիւղերը, գեղարուեստա-
կան, ձեռարուեստի դասերը, ձայնական եւ գործիական երաժշտութիւն՝ բազ-
մազգուած եղանակաւ: Վարժարանը կը բացուի Սեպտ. 1ին եւ դասախօսու-
թիւնները կը սկսին նոյն ամսոյն 8ին Բ.:

Կը հրաւիրուին Պատ. ծնողք եւ պաշտպանք մինչեւ 1 Սեպտ. դիմել
արձանագրութեան համար Տնօրէնութեան, որ ամէն օր մինչեւ կէս օր կը
գտնուի իր բնակարանը Սկիւտար-Իճատիէ, Գալսէրի Օղլու փողոց թիւ 13:
Պայմանք դիւրամատչելի: Հինգ աշակերտով դասարանները պիտի բացուին:
Զաւիհաս օրիորդներ մասնաւոր ճիւղերու կրնան հետեիլ:

Հիմնադիր-Տնօրէն
ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՔՐԱՆԱԿԱՆ ԱՄԵՆԱԸՆՏԻՐ ԱՍԹԻԿ

Զմեռը մօտեցաւ, անձրեւները սկսան, հետեւաբար լասթիկները եւ լաւ
լաստիկները կարեւոր մէկ առարկան սկսան ըլլալ դարձեալ մեզի... մահ.
կանաչուներու համար:

Լաւ լասթիկ ունենալը կը նշանակէ թէ լաւ խելք ունիք եւ չնորհքով
մարդիկ էք: Արդ զիմեցէք, գացէք առէք Յիւսիսական այն լասթիկները
որոնք շատ քիչ մնացած են եւ 4 ամիս կառանքիով կը տրուին: Անցեալ
տարի այս ապրանքը կամուրջին գլուխը Շեքիպէթիին խանութը փոքրա-
քանակ, իսկ Ալըր էֆ. խան, Նօ. 27 Պողոսօֆի քով կը ծախուէր մեծա-
քանակ. հիմայ թէ մեծաքանակ եւ թէ փոքրաքանակ կը ծախուի Պոլս,
Ալըր էֆ. խան, թիւ 27, տիար Մկրտիչ Պողոսօֆի գրասենեակը:

Ո՛վ Մաղիկի եւ Կալիօշի ընթերցողներ, վաղեցէ՛ք տիար Պողոսօֆի
քով եւ անպատճառ գնեցէ՛ք հատ մը:

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ Շ Ի Շ Ե Ր (Verres pharmaceutique)

Դեղարաններու եւ դեղօրէից վաճառականներուն համար մասնաւոր չին.
ուած չիչերը մինչեւ հիմա Հրեայ վաճառական մը Վեօթօջ ըրած էր:
Այժմ ուրախ ենք յայտարարելու որ տիար Մկրտիչ Պողոսօֆ (Ալըր էֆէնտի
խան, թիւ 27 գրասենեակը) ձեռնարկած է այս գործին եւ ունի ճոխ ու այ-
լազան մթերք մը այդ կարգի ամէն կերպ չիչերու եւ կարող է մրցիլ ամէն
կերպով: Վստահ եւ ապահով ենք որ թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառի մեր բոլոր
Հայ դեղագործները եւ տոկիսքները պիտի փութան իրենց գնումը ընել այս
Հայ եւ այս ճիւղին մէջ մէկ հատիկ առեւտրական տունէն, քաջալերելու
համար Հայ ձեռնարկուն որ միւսնոյն ատեն աժանութիւնը բնական ընտրած
է իրեն:

ՄԱՍՆԱԳԻՏ ԱՏԱՄԱՐԱՆ

ՏՈՒԹՈՒ Մ. ԱՅԱՆԵԱՆ

Վկայեալ Բարիկի համալսարանէն, եւ անձնական ատանմաբոյժ եր-
ջանկայիչատակ Մուղաֆէրէտտին Շահին:

Բերա Մեծ Փողոց, ռուսական դեսպանատան դիմաց Սիթէ տը Սիրի,
ուր կը դարձան ամէն տեսակ ակռայի, լիտի եւ բերնի հիւանդութիւններ
վերջնական ընդունուած մէթոտներով, կեղծ ակռաներ սան քրօշէ է սան
բլաք տասը տարի ապահովութեամբ:

Սոյն դարձանները կը կատարուին Գաղղիական եւ Ամերիկեան ամե-
նալերջին հարուած գործիքներով, որով ենթական՝ ամէն տեսակ գործո-
ղութիւնները պիտի ընդունի, առանց ցաւի եւ առանց քնացուելու: Գար-
մանատունը Բարիկեան մասնագիտական վերջին սիսդէ-մով, իր տեսակին
մէջ եղական է: Այցելեցէ՛ք եւ դատեցէ՛ք:

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆԻՔ

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ

1. Պատկերազարդ Տարր. Աշխարհագրութիւն 2,50 դր.::

2. Պատկերազարդ Միջին Աշխարհագրութիւն 7 դր.::

3. Պատկերազարդ Բարձր. Աշխարհագրութիւն 6 դր.::

4. Պատկերազարդ պատմ. Արեւելեան Հին ազգաց եւ Յունաց 5 դր.::

5. Համառօտ Օսմ. պատմութիւն 2,50 դրուչ:

Հանրածանօթ մասնագէտ հեղինակին կրկին տպագրութիւններով գնա-
հատուած սոյն օգտակար դասագիրքերը կը գտնուին բոլոր գրաւաճառնե-
րուն քով:



ՎԱՅԵԼԶԱՍԵՐ ԿԻՆԵՐԸ

ՈՐՈՆՔ Կ՛ՈՒՋԵՆ ՊԱՇՊԱՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏՐ Է. ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱԾԵՆ

ՃԵՄԱՐԻՑ

ԳՐԻՄ ՍԻՄՈՆԸ

ԿԼԻՍԵՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ՀՆԱՐՈՒԱԾ 1860

ԱՄԵՆԱՇԻՆ

ԳԵՂԵՑԿԱՑՆՈՎ ԵՐԵՎԱՆ

ԿԸ ԳՏՆՈՒԻ —

— ԴԵՂԱՐՈՇՆԵՐՈՒ — ՀՈՏԵՂԻՆԱՅ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ —

— ՊԱՋԱՐՆԵՐՈՒ ՄԷՋ —

ԳՆԵԼՈՒ ԱՏԵՆ Լաւ Ռաշարոյթիսն Ընկեջ --

— ՎԱՃԱՌԱՆԻՇԻՆ Եւ Մեղծեջ —

ԿԵԼՇ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ —

ԲՐՆԶԱՓՈՇԻ

ՕՃԱՌ

ՍԻՄՈՆ

ԳՐԻՄ ՍԻՄՈՆ

ԱՌԱՆՑ ՊԻՍՏՈՒԹԻ

ԲԱՅԱՐԶԱԿԱՊԷՍ ՄԱՔՈՒՐ

Ժ. ՍԻՄՈՆ - ԲԱՐԻՋ